ՆՈՐ-ԴԱՐ

№ 129 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ 2 Օգոստոսի 1885 Ուրբաթ 2 Օգոստոսի ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ № 129

եկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. Հատով 5 կոպէկ: ժանորդագրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“ կամ՝ Tiflis. Rédaction «Nor-Dar»:

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը: Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով: Յայտարարութիւնների բառին 2 կ., ընկլամների համար՝ կրկնապատիկ.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

«Նոր-Դար»-ին բաժանորդ են գրվում յուլիսի -ից մինչև դեկտեմբերի 31-ը և վճարում են—6 ր.

Հասցէների փոխութեան համար վճարում են օթը հատ եօթը կոպէկանոց մարկա:

Թերթը անմիջապէս ստացող բաժանորդները ճարում են 80 կոպ.

Յայտարարութիւնները ընդունվում են միմիայն մբագրատանը, քաղաքի կենդրոնում, պօստատան ետևը, Տրօյիցկի փողոցում Սամբեա եկեղեցու հանդէպ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր: Վնասատու միջատներ: Կարկուռ էֆէնտի և իւր մեենայութիւնները:

Քաղաքական.— Զինուորական արցը Ֆրանսիայում և ընտրութիւնները:

Խառն լուրեր

Հեռագիրներ.

Յայտարարութիւններ.

ՔՐՈՆԻԿՈՆ

Մեզ գրում են.—Ուզում եմ գրել ձեզ ի անցքի մասին, որը առաջին անամ չէ տեղի ունենում գործակատարների երկրորդայում այսինքն Թամամշեանի կարանսարայում: Անցեալներումս մի կին արծեմ գիւղացի) մտնում է գործատարների սենեակն և առաջին պատահած չիպաշնիկից պահանջում է մեաքսեայ հովանոց, իսկ մեր պարոն պաչիկը մետաքսեայ հովանոցի փոխարէն խաբելով տալիս է բրդէ հովանոց և նրա համեմատ գին վերնում:

Խեղճ կինը տանն է իմանում որ աբուել է և վերադառնալով քարանսարան իւր տուած փողը յետ է ահանջում: Մեր չիպաշնիկը նրա համար հօ չէ խաբել, որ փողը վերադարձնի: Կինը սպառնում է ասելով, պասիր գնամ ձեր ուստաբաշու մօտ“ հարկէ ամէնքն էլ գիտեն, որ ուստաբաշի գոյութիւն չունի, բայց երբ կինը ուրիշ չիպաշնիկի հարցնում է այդ ասին, սա ուղարկում է նրան երրորդի մօտ, այդպէս քարվանսարայի գործակատարները խեղճ և խաբուած ինոջը խաղալիք են շինում մեկ խանութից միւսը ուղարկելով:

Աւելի երևելի է ծեծուած ճշմարտութիւնը, ա արդէն գործակատարներին հասնողը է: յդտեղ իւր գործակատարական ուսմունքը վերջացնողը կարող է մեծ պաիւ բերել իւր խօզէինին — Նորերումս ինքս ականատես էի թէ ինչպէս մի պատաւ կնոջ խտտած մէկ խանութից միւս խանութն էին վազեցնում և այդպիսով իրենց խօզէիններին անչափ ուրախացնում: Դժուար բանէ, եթէ չասենք անկարելի, այդ տեղով անցնելը:

—

ՇԱՀՆԱԶԱՐ գիւղից.—Սա Թիֆլիսից 00 վերստ հեռու է դէպի հարաւային ողմը: Շահնազարցիք բոլորն էլ հայ թոլիկներ են, 150 տուն, Ալաշկերտու գաղթականներ են 1820 թուականից: 1878-ին շահնազարցիք գնեցին կաք գէնէրալի հողերից 4000 դեսեատին երկիր, և վճարեցին երեք տարի ժամանակով 60,000 րուբլի: Այս տարի ևս գնեցին շահնազարցիք, 720 դեսեատին հնձելու երկիր, որն որ կընեազ Դիգօ Օրբէլեանի սեպհականութիւն էր. 3,000 րուբլի կանխիկ վճարեցին շահնազարցիք, 5000 րուբլի էլ, երեք տարի ժամանակով պէտք է վճարեն. ընդ ամէն 8000 րուբլի է: Շահնազարի հասարակութեան տնտեսական վիճակն մի օրինակէլի և նախանձելի վիճակ է, ըստ ամենայնի բարւոք կենցաղավարւում են, երկու եկեղեցի ունին և երկու ուսումնարան: Եկեղեցիք լի են բազմութեամբ, բայց ուսումնարաններն պարապ են, վասն զի երկրագործական կեանքը աւելի սիրում են շահնազարցիք քան թէ ուսումնական կեանքը: *)

Շահնազարցիք պէտք է աւելի շնորհակալ լինեն իւրեանց համարնակից պարոն Յովհաննէս Ալվազովից, որն որ թէ նախկին հողերն գնելուն և թէ այժմուս առաջին պատճառ և առաջին աշխատողն եղաւ, որոնց արած լաւութիւնը անմոռանալի յիշատակ պէտք է մնայ շահնազարցոց սրտերուն մէջը:

—

Մուշէն քանի մը Հայ և Թուրք երևելեաց կողմէ մայրաքաղաքիս Թուրքերէն լրագրաց ուղղեալ հեռագիր մը գոհութեամբ կը ծանուցանէ թէ, կառավարիչ Սալիհ փաշա յաջողուած է ձերբակալել այն Քուրդ աւազակներն, որք սոսկալ գիւղարնակ գժբաղդ ժողովրդեան վրայ յարձակելով կը կողոպտէին անոր օրապահիկն:

(Լոյս)

—

ՄԱՏՐԱՍԱՅԻՑ.—Շամախու վիճակաւորի տնօրինութեամբ Դ. Ծոնչունու գաւառի գործակալի հետ միասին վիճակը պտտում է նաև Շամախու Ս. Աքհանայ տէր Յովհաննէսը այն նպատակաւ, որ իւրաքանչիւր գիւղի եկեղեցում ժողովուրդին քարոզէ: Յուլիսի 13- և 14-ին՝ շաբաթ և կիւրակի օրերում՝ շաբաթ երեկոյեան, կիւրակի առաւօտեան և կէս օրուայ ս. պատարագին քարոզներ լսուից և ժողովուրդը քարոզ լսելով մխիթարուեցաւ... պաշտօնակցի հետ մեկնուեց՝ դէպի սարի գիւղերանքը: Սրանց յանձնուած են ժողովուել հոգևոր տուրքերը և պատուիրել բոլոր եկեղեցիների երեսփոխաններին պատրաստել և ստանալ եկեղեցապատկան դրամները, ըստ որում այնանը վիճակաւորը պէտք վիճակը ինքը եկեղեցիների գումարները երեսփոխաններից գրաւոր կերպով ընտանայ և ուղարկի բանկ: Մասնաւոր անձինքներին տոկոսով տուած փողերից փչանում են: Այս նոր տնօրինութիւնը հաստատուած է ս. Սինոդից:

Սարի գիւղերանքից մէկ գործակալի ասութեամբ՝ եկեղեցու վեց հարիւրից մինչև 800 ր. փողն մի մարդ ուրացել է: Ս. Սինոդի—եկեղեցեաց գումարների վերաբերութեամբ կարգադրութիւնը շատ հաճելի է:

Անսպասելի շոգեր են լինում. տասս հունձը վերջանալու վերայ է.

—

Պետական բանկայի բաժանումը Թիֆլիսում տեղափոխուել է իւր սեփական տունը Ֆրէյլինեան փողոց, նախկին Մ. Թամամշեանի տունը:

—

Արմաւիրի գործակատարները, իշխանութեան խնդրեք են ներկայացրել կիւրակի օրերը պարապմունքից ազատ լինելու համար և ինչպէս գրում են „Донск. Пчела“ թերթին, խնդիրը յաջող հետևանք պիտի ունենայ:

—

Եգիպտոսի նորընտիր առաջնորդ Գեր. Տ. Մամբրէ վարդապետ Մարկոսեան, որ Ս. Երուսաղեմայ պատրոց համար ի Ռուսաստան նուիրակ ղրկուած է, և Նոր-Նախիջևանի շրջակայները կը գտնուի, իմացուցած է թէ մինչև որ իւր հանգամանութեան պաշտօնը չաւարտէ, չպիտի կրնայ իւր պաշտօնատեղին երթալ: Գեր. Մամբրէ վարդապետ իւր հեզահամբոյր բնաւորութեամբ այն չափ համակրութիւն գտածէ ի Ռուսաստան, և մեծամեծաց կողմէ բացառիկ ընդունելութեամբ պատուասիրուած է, ինչպէս նաև ի Բագու՝ ժողովրդեան կողմէ ոսկի ժամացոյց մը նուիրուած է իրեն և վերջին անգամ Նոր-Նախիջևանու Ս. Խաչ վանքին մէջ կատարուած բարեգործական ընկերութեան 25 ամեայ յոբելեանին առթիւ, մշտնջենաւոր պատուոյ անդամ յորջորջուած է:

(Լոյս)

—

Հաւլաբարի հրապարակի վերայ, Լեչերնիցայի (քաղաքային հիւանդանոցի մասն) տներին կից արևելեան կողմը գտնվում է մի աւերակ տուն, որի մէջը հրապարակի ամբոխը դարձրել է իւր համար ապտաքնոց: Այդ փողոցով առանց քիթը բռնած անցնելն անհնար է, շոգերին գարշահոտութիւնը բուրում է: Արդեօք ո՞ւմ պարտաւորութիւնն է քաղաքիս մաքրութեան և առողջապահութեան մասին ոչ ձևական հոգատարութիւն անելը:

—

Քաղաքիս փողոցները մաքրելիս մի կողմից աւելում են աղբը, իսկ միւս կողմից էլ սայլակներով վերցնում են և տանում: Իսկ Հաւլաբարում այդպէս չէ. բաւական չէ որ աղբ աւելող մշակները շատ ուշ ուշ են շնորհ բերում, (՚ի հարկէ նրանք մեղաւոր չեն). երբ որ աւելում են փողոցները, մի քանի օրից յետոյ են գալիս աղբը տանելու: Բայց մինչև նրանց գալը տներից ամխներով առաջ ժողոված աղբը թափում են փողոցները, որով դառնում է պէէնիկէ-պէէնիկէ նոյն աղբանոց:

—

Նորերումս մի ռուս սպաս „Կրուժոկ“ անուանուած ժողովարանում ընթրելիս բերանից կոխոցն է ընկնում արհեստական ատամքը: Թէպէտև վերայ հասնող բժիշկը մի օպերացիայով աշխատեց ազատել սպային, բայց չը յաջողուեցաւ, և ինչպէս „Тиф. Объяв.“ գրում է սարսափելի տանջանքով մեռաւ անբժելով ատամնաբոյժերին և խիրուրգներին.

—

Պետերբուրգում մի ընկերութիւն է կազմուել, որ մտադիր է բանալու մի [illegible]: Գործարանը ի մէջի այլոց պէտք պատրաստէ անուշահոտ իւղեր Հարաւային Ռուսիայից բուսեղէնից և ծաղիկներից: Անուշահոտ իւղեր պատրաստելու համար ընկերութիւնը մտադիր է, ինչպէս գրում է С.-Петерб. Вѣд.“ հաստատել մի առանձին գործարան Կովկասում.

—

ՎՐԻՊԱԿ

„Նոր-Դար“-ի № 124-րդում Սալեանեցը գրուած „Հրաչը“ վերնագրով գրուածքի մէջ փոխանակ 1884-ի պէտք կարդալ 1874

ՎՆԱՍԱԿԱՐ ՄԻՋԱՏՆԵՐ.

Գիւղական տնտեսութեան աճումն կախումն ունի երեք գլխաւոր հանգամանքներից.-ա) Կլիմատից, բ) հողի կազմուածքից և նրա յատկութիւններից. և գ) այն վնասներից, որոնք տալիս են գիւղատնտեսութեան վնասակար միջատները: Առաջին երկու հանգամանքների վերայ վաղուց արդէն ուշք են դարձնում գիւղական տնտեսները, իսկ ինչ որ վերաբերում է երրորդ հանգամանքին, որի հետ կամենում ենք ծանօթացնել մեր ընթերցողներին, և որի մէջ մտնում են գլխաւորապէս վնասակար միջատները, երկար ժամանակ աչքից թողուած էր:

Միայն վերջին ժամանակներում վնասակար միջատների մեզ հասցրած մեծագին վնասները ստիպեցին գիւղական տնտեսներին ուշք դարձնել այդ հանգամանքների վերայ: Բերենք այստեղ մի քանի կցալի ապացոյցներ ցոյց տալու համար միջատների մեծ նշանակութիւնը գիւղատնտեսութեան վերաբերմամբ:

Վերջին տասն և հինգ տարուայ ընթացքում փիլոքսերան ոչնչացրեց Ֆրանսիայում 500,000 դեսեատին այգեստան և այդ փոքր ժամանակի մէջ հասցրած վնասը հասնում է 5 միլիարդ ֆրանկի: Այսպիսով տեսնում ենք, որ փոքր ժամանակուայ միջոցում Ֆրանսիան ստիպուած էր հատուցանելու փիլոքսերային այնքան հարկ, որքան հատոյց դրանից մի փոքր առաջ պրուսիային (1871 թ. պատերազմից յետոյ): Վաշինգտոնում (Ամերիկայ) երկրագործական մինիստրի հաշիւներից տեսնում ենք, որ 71 թուականում զանազան միջատների հասցրած վնասն հասնում է երեք հարիւր միլլիոն դոլլարի:

Ռուսիայում վնասակար միջատները իրենց վնասակարութեամբ յետ չեն մնում հարաւային եւրոպացիներից: Բաւական է միայն յիշել ցորենի բզէզն որը վերջերումս երևեցաւ ցորենի հասկերի վերայ:

Դրա պատճառած վնասները, հարաւային Ռուսիայում, հասնում է մինչև հարիւր միլիոն րուբլի: Միայն Մարիոպոլի գաւառում (Եկատերինոսլաւի նահանգում) դրա պատճառած վնասը հասնում է մինչև տասն և մէկ միլլիօն րուբլի: (Եկատերինոսլաւում 80 թուականին ժողովուած բզեզների քանակութիւնը հասնում էր 10 փութ:

Այգեգործութիւնը և անտառապահութիւնը նոյնպէս ազատ չեն մնում վնասակար միջատներից:

Զանազան միջատների թրթուրները, որոնց մասին ժամանակին կը խօսենք, պատճառում են ահագին վնասներ մեր այգիներում. Արևմտեան Աթէսը, որը մի քանի տարի առաջ երևաց Խերսոնում, 1880 թ. Նիկոլայեան այգում ոչնչացրեց 5 հազար խնձորներ, որոնք փոքր ժամանակից յետոյ բոլորովին չորացան. Գաղափար կազմելու համար թէ ինչ ահագին վնասներ կարող են տալ օրինակ մետաքսահիւսների թրթուրները, բաւական է միայն յիշել, որ 1887 թ. Վալուեան գաւառում (Սարատովի նահանգում) Ocneriaa dispar-ի (Օգներեայ եսպար) թրթուրները ամիս ու կէս ժամանակուայ միջոցում. (Ապրիլի սկզբներից մինչև մայիսի վերջերը) բոլորովին ոչնչացրին 10 հազար դեսեատին անտառներ: Հազիւ կարելի է գտնել բոյսեր, որոնք գէթ չունենան մի քանի թշնամիներ բազմաթիւ միջատներից: Եթէ համեմատելու լինենք վնասակար միջատների թիւը մեզ յայտնի միջատների բոլոր տեսակների թուի հետ, կտեսնենք որ վերջինների թիւը չնչին է. Գերստակեր պրօֆեսորի հաշուից մեզ յայտնի է 180 հազար տեսակ միջատներ: Այդ թուի մէջ մտնում է 550,000 տեսակներ, որոնք կերակրուում են մարդու համար ամենահարկաւոր բոյսերով: Այդ թուից երևում է վնասակար միջատների քանակութիւնը համեմատութեամբ ընդհանուր միջատների քանակութեան հետ չնչին է, միայն պէտք է նկատել որ վնասակար միջատների թիւը բազմանում է անընդհատ, բազմանալով բուսական թագաւորութիւնը:

Երբ ոչնչանում է մի բոյս վատ հանգամանքների տակ, միջատներն ևս թողնելով հին բոյսերին գաղթում են կուլտուրական բոյսերի վերայ, որտեղ նրանք աւելի յաջող հանգամանքների տակ բազմանում են: Վերցնենք օրինակ ցորենի բզէզը, որը յայտնի է Եւրոպայում արդէն 100 տարի,

Սկզբներում նա բաւականանում էր վայրենի խոտերով, բայց երբ բազմանում է հացաբոյսերի քանակութիւնը, այն ժամանակ թողնելով առաջիններին գաղթում է վերջինների վերայ, որտեղ նա գտնելով մեծ և շատ կերակուր, բազմանում է այնպէս, որ վերջին 25—30 տարիների ընթացքում, արդէն նա հանդիսանում է հզօր և ահեղ թշնամի երկրագործութեան, և այն ևս այնպիսի տեղերում, որ երբեմըն համարւում էր անվնասակար:

Այդպիսի հանգամանքների տակ, հասկանալի բան է, որ վնասակար միջատների թիւը օրից օր բազմանում է:

Միւս անգամ կաշխատենք ընթերցողներին ծանօթացնել գէթ այն միջատների հետ, որոնք զգալի կերպով վնասում են գիւղատնտեսութեան, անտառապահութեան և այգեգործութեան. Կաշխատենք համառօտապէս նկարագրելու նրանց յատկութիւնները տուած վնասները և նրանց ոչնչացնելու միջոցները:

Բ. Արամ.

---

*) Այդ էր պակաս որ գիւղացինները երկրագործութիւնից աւելի սիրում լինէին ուսումնական կեանքը:

Խմբ.

ԿԱՐԿՈՒՐ ԷՖԷՆՏԻ
ԵՒ ԻՒՐ ՄԵՔԵՆԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Արդէն ծանուցած էինք որ, ընդարձակ և մեծածախ գետնի մ՚ սեփականութիւնն աւելի Երուսաղէմի Ս. Յակոբայ վանուց միաբանութեան և իւր խորհրդաւոր դասերով հանրածանօթ ձևացեալ Կարկուր էֆէնտիի միջև ծագած դատին մէջ, Անատօլուի Գազասկէրութեան ատեանն աննպաստ վճիռ մ՚ արձակած էր ընդդէմ Ս. Յակոբայ վանուց։

Միաբանութիւնն յիշեալ վճռոյն վերաքննութիւնը պահանջող բողոքագիր մը մատուցած է Ֆէթվաֆանէին, յորմէ կը տեսնուի թէ, Կարկուր էֆ. ժամանակաւ Երուսաղէմի մէջ դատ գատուեր քանի մը կտոր գետին գնելով, իւր սեփականութեան իրաւունքն ի պաշտօնէ արձանագրել կուտայ կալուածագրոց տումարին մէջ։ Ժամանակ անցնելէ յետոյ, Կարկուր էֆ. արձանագրութեանց տնօրէնին ներկայանալով, յիշեալ արձանագրութեան մէկ օրինակն, այն է՝ կալուածագիրն (հէօճճէթը) կը պահանջէ, և տումարն ինք կարդալով, հէօճճէթը պաշտօնէին գրել կուտայ։ Այս առիթէն օգուտ քաղելով, Կարկուր էֆ. կարդացած միջոցին բոլորովին տարբեր և ընդարձակ սահմաններ գրել կուտայ, և իւր գնած կարծեցեալ հողերուն նախկին տէրերուն անուններն ալ կը փոխէ, բայց որ և է փոփոխութիւն չըներ գիներուն մէջ։

Կարկուր էֆ. քաջահմուտ լինելով տաճկերէն լեզուի, կարդացած միջոցին խաբէականութեամբ կը յաջողի իւր ուզած կերպով գրել տալ, և այս կերպ կալուածագիրը ձեռք անցունելէ յետոյ, լուր կը հանէ թէ արձանագրութեանց տնօրէնն իւր գրել տուած բոլոր հողերը գնած էր։ Երբ յիշեալ հողերուն տէրերը կը լսեն եղած խարդախութիւնը, կը բողոքեն կառավարութեան և այս վերջինն ալ քննութիւններ կատարել յետոյ, կը վճռէ թէ Կարկուր էֆէնտիի ձեռքը գտնուած կալուածագիրը կեղծ և՛ ապօրէն էր, և այս վճիռը կ՚արձանագրուի կալուածական արձանագրութեանց տումարին մէջ (սիճիլ տէֆթէրի)։ Հիմակ, յիշեալ հողատէրք իրենց գետիններն աճուրդի կը դնեն և Երուսաղէմի միաբանութիւնն ալ աճուրդի մասնակցելով, քանի մը հազար ոսկւոյ փոխարէն կը գնէ նոյն հողերն և կանոնաւորապէս ու ըստ օրինի արձանագրել կուտայ կալուածական տումարաց մէջ։

Սակայն կեղծ կալուածագրոյն մէկ օրինակը Կարկուր էֆէնտիի քով մնացած լինելով, այս ճարտարամիտ և հնարամիտ փաստաբանն՝ օրինական ժամանակին անցնելէն յետոյ, այժմ ելեր է կ՚առարկէ թէ յիշեալ գետինն իւր սեփականութիւնն է։ Կարկուր էֆ. թէև կ՚առարկէ որ յիշեալ գետինն իւր հօր կողմէ ժառանգութիւն մնացած էր իրեն, և թէ 25 տարի առաջ Երուսաղէմայ այն ժամանակի կառավարիչը «յատուկ նպատակաւ մը» յիշեալ գետինը „մահլուլ" համարելով աճուրդի դրած և յանիրաւի վաճառած է, սակայն իւր ձեռքը գտնուած կալուածագրոյն կեղծութիւնն ու խարդախութիւնն Երուսաղէմայ մէջ ի պաշտօնէ հաստատուած իրողութիւն մ՚է։

Անատօլուի Գազասկէրութեան ատեանն ասիկէ առաջ կոչնագիր յղած էր Ամեն. Տ. Եսայի Սրբազանին, մինչ Ն. Սրբազնութիւնը մայրաքաղաքս կը գտնուէր։ Սակայն Եսայի Սրբազան հիւանդ լինելով դատին յետաձգումը խնդրած էր, Ասոր վրայ երկրորդ կոչնագիր մը ղրկուած լինելով, Եսայի Սրբազան ի պաշտօնէ ծանուցանելով թէ՝ դատին վերաբերեալ կալուածագրերն Երուսաղէմ կը գտնուին, զանոնք բերել տալու համար պայմանաժամ մը խնդրած էր, և ազգ. Պատրիարքարանի Թուրքերէնի գլխաւոր դպիր Կարապետ էֆ. Խաչատուրեան ևս փոխանորդաբար ի դատարան ներկայանալով, թէև յետաձգում պահանջած էր, սակայն դատարանն՝ այս պահանջման ականջ չը դնելով, ի բացակայութեան վճիռ տուեր է ընդդէմ Երուսաղէմայ Միաբանութեան։

Եթէ այս վճիռ չկրնայ լուծուիլ, Կարկուր էֆէնտի ձրիաբար ձեռք պիտի անցնէ ընդարձակ գետնի մը, որ ըստ ոմանց 25,000 և ըստ այլոց մինչև 80,000 ոսկւոյ արժողութիւն ունի։ Այս մեծ դատին յաջողութեան համար Կարկուր էֆ. իրեն ազդեցիկ օգնողներ ունի եղեր։

Իսկ այս վիճակին մէջ, ազգային մէկ մեծ իրաւունքը վտանգի մէջ կը գտնուի, եթէ հարկ եղած օրինական միջոցներն անյապաղ ձեռք չառնուին։ Ամեն Ս. Պատրիարք Հայրն և ազգային իշխանութիւնք անշուշտ իրենց ազդեցութիւնն ի գործ պիտի դնեն՝ ազգային իրաւունքը փրկելու համար իրեն սպառնացող վտանգէն։

Թէրճիմանը Հագիգաթ լրագրին որոյ խմբագրապետն է հանրածանօթ գրագէտ Միտհատ էֆէնտին, խըստիւ կը քննադատէ և ամեն օր ի վեր կը հանէ Կարկուր էֆէնտիի խարդախութիւններն ու մեքենայութիւններն, զորս շարունակ կը նիւթէ այս կամ այն անձին դէմ, ամեն անգամ որ առիթ մը ներկայանայ։ Կարկուր էֆէնտի ունկնդրելուց եղած է Թէրճիմանը Հագիգաթի արդար քննադատութեանց դէմ՝ լռութիւն՝ որ ըստ ինքեան դատապարտութիւն մ՚է։

(Լոյս)

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Վերջին տեղեկութիւններին նայելով ֆրանսիական պատգամաւորների ժողովի առաջիկայ ընտրութիւններին զինուորական բաժնի հարցը առաջնակարգ դեր պիտի խաղայ։ Սկսում են զգալ յօգնութիւն յաճախակի զօրքերի պահպանութեան համար գործադրած ահագին ծախսերից, և սրա վերայ հակառակ կուսակցութիւնները պէտք է որ առանձին ուշադրութիւն դարձնեն։

1871 թուականի պատերազմից յետոյ Ֆրանսիան ոչ դրամական միջոցներ, ոչ եռանդ չը խնայեց, որպէս զի ապագայում կարողանայ իւր վրէժը առնել Գերմանիայից։ Ֆրանսիական հասարակապետութիւնն կամեցաւ գերազանցել գերմանական կայսրութեան իւր զօրքերի թէ՛ թուով, թէ՛ կազմակերպութեամբ և թէ՛ սպառազինութեամբ։ Այդպիսի քաղաքականութիւնը շատ վատ ազդեց հասարակութեան ֆինանսների վերայ և մի քանի միլիոնի պարտք դրուեցաւ, իսկ Գերմանիան մինչև այժմ յաջողվում է պատշաճաւոր հաւասարակշռութեան մէջ պահպանելու իւր բիւջէտը։ Այժմ ֆրանսիական զօրքը իւր քանակութեամբ նշանաւոր կերպով գերազանցում է գերմանական զօրքին, իսկ ինչ վերաբերում է կազմակերպութեան և սպառազինման, զինուորական հեղինակաւոր անձնաւորութիւններ Ֆրանսիայում դեռ ևս պարզ դաշտ են գտնում իրենց կշտամբական նկատողութիւնների համար։

Այն արտաքոյ կարգի զոհաբերութիւնները, որոնց պահանջեցին ազգից Թիէրն և Գամբետտան, այն յուսով միայն կատարուեցաւ տանել ազգը, որ Էլզաս-Լօտարինգայի ազատութեան պատերազմը շատ երկար չի սպասեցնել տայ։ Պատերազմից յետոյ, ինչպէս ամենքն այն ժամանակ համոզուած էին, պիտի հետևէր զինաթափութիւն և մշտական խաղաղութիւն։ Բայց խաղաղութեան տարիները մէկը միւսի յետևից անցան և ազգը սկսեց զգալ իւր վերայ դրուած բեռան բոլոր ծանրութիւնը։ Բացի ընդհանուր զինուորագրական պարտաւորութիւնից, որով 4 տարի պէտք է զինուորական ծառայութեան մէջ մնայ զինուորը, Ֆրանսիայում գոյութիւն ունի և տարեկան կամաւոր զինուորների ինստիտուտը (հաստատութիւն), որը ռամիկ ժողովրդի ատելութեան արժանի է հանդիսանում. Այս հաստատութիւնը հարստութեան արտօնութիւն է դարձած և ոչ թէ կրթութեան, ինչպէս այս լինում է Գերմանիայում և ուրիշ երկրներում։ Սրա հետ միանում է և զգալի այն գաղթական պատերազմների դէմ, որոնց աններհատ մղում է Ֆրանսիան սկսած ալժիրական ապստամբութիւնից, և որոնք արդէն բազմաթիւ զոհեր են կորզել ֆրանսիական զօրքերից։ Գաղթականական պատերազմներից Ֆրանսիայի հասած վնասը կարող ենք հասկանալ, եթէ երևակայենք, որ մի տէրութիւն հազարաւոր վերստեր հեռու իւր սահմանից պահում է զինուած 2 զօրաբաժին որոնք տարէցտարի տեղական վարակիչ ցաւերի զոհ են դառնում։

Այս բոլորը ի միասին վեր առած ստիպում է ֆրանսիական ազգին ուշադրութիւն դարձնել ընտրողական մասնաժողովների ծրագրի այն կէտի վերայ, որտեղ ասուած է զինուորական բիւջէի և զօրքի մասին։ Նշանաւոր է այն, որ բոլոր կուսակցութիւնները անխտիր խոստանում են ֆրանսիական ազգին վերցնել զինուորական ծախսերի ծանրութիւնը։ Ամենից աւելի յաջողաբար է գործում արմատական կուսակցութիւնը։ Ինչպէս յայտնեց Բորդոում Կլեմանսօն, արմատականները ցանկանում են վերջնականապէս բաժանել ներկայ զինուորական կայազօրը և փոխարինել զօրքը կամաւոր զինուորներով՝ Ֆրանսիան աւելի ձեռնտու դրքի մէջ է գտնվում, քան Գերմանիան. Նա շրջապատուած չէ ամեն կողմից հզօր հարևաններով և ունի բնական սահմանի ահագին գիծ։ Եթէ որ Ֆրանսիան փոխանակ իւր ուժերը սպառելու Էլզաս-Լոտարինգիայի համար մղուած կարծեցեալ պատերազմի վերայ, գործ դնէր իւր միջոցները ներքին վերանորոգումների վերայ, նրա դերը աշխարհումս ուրիշ կը լինէր և նրա օրինակը բարերար ազդեցութիւն կունենար ուրիշ ազգերի վերայ։ Այլ հայացքներ են արտայայտում պահպանողականները։ Նրանք խորհուրդ են տալիս նորից ներս մտցնել հին կամաւոր զինուորագրութեան եղանակը, որ թէ այնպէս թանկ չէ նստում և թէ նպաստում է միևնոյն ժամանակ զօրքերի մէջ պատերազմական տեխնիկայի զարգացմանը։ Զօրքի ուժը կայանում է, պահպանողականների կարծիքով, ոչ թէ քանակութեան մէջ, այլ կազմակերպութեան և կրթութեան մէջ։

Այդպիսի զօրքով Ֆրանսիան, հարկաւոր եղած ժամանակ, կարող էր անհամեմատ աւելի յաջողութեամբ մաքառել իւր թշնամիների դէմ, քան այժմ, երբ ֆրանսիական կառավարութեան տնօրինութեան ներքոյ է գտնվում լի՛ մեծաքանակ, բայց վատ կազմակերպուած զինուորների բազմութիւն։ Այսպէս են կարծում պահպանողականները, իսկ օպպորտունիստները պարզ յայտարարում են զինուորական ծառայութեան ժամանակաշրջանի կրճատումն և տարեկան կամաւոր զինուորների ոչնչացումն։ Ռոշֆորը յանդիմանում է օպպորտունիստներին նրանում, որ նրանք վրէժխնդրութեան գաղափարի հետ են խաղում։ Կարելի է հաւաստի ասել, որ պահպանողականների գաղափարները աւելի համակրական են ֆրանսիական ազգին, և նրանց զինուորական ծրագիրը անտարակոյս բարերար ներգործութիւն կունենայ պահպանողական կանդիդատների ընտրութեան վերայ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բոլոր չորսը։—Բերլինի մի հարուստ վաճառականի մօտ, որ 4 գեղեցիկ աղջիկներ ունի, սկսեց մի քանի ժամանակից ի վեր շուտ շուտ յաճախել մի շատ կրթուած, ճարպիկ և միշտ գեղեցիկ հագնուած ամերիկացի, որի հետ ծանօթացրել էր նրա ընկեր վաճառականը։ Մի առաւօտ գալիս է այս երիտասարդ ամերիկացին և յայտնում է Բերլինի հարուստ վաճառականին, թէ մի շատ հարկաւոր գործի մասին ուզում է խօսակցել։ Վաճառականը նրան ընդունեց, և երբ նրանք նստան հիւրասենեակի մէջ, երիտասարդ մարդը ասաց. «Պարոն տէր, ձեր աղջիկները ինձ շատ են դուր գալիս և՛ ես խնդրում եմ նրանց ձեռքը»—«Ինչպէս, բոլոր չորսին, հարցրեց ընտանիքի հայրը։ Ցնորացել էք ինչ է։

—Ոչ, պարոն տէր, ես խելագար չեմ, այլ մորմոն եմ"։

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

„ՆՈՐ-ԴԱՐ"-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

31 Յուլիսի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Այսօր նշանակուած է Կրասնոսելօում բնակուած զօրքերի Բարձրագոյն այցելութիւնն և զինուորական ուսումնարաններում աւարտած աշակերտների սպայի աստիճան տալը։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ. Բիւրօնը Տամսկից ստացել է տեղեկութիւն, որ տօնավաճառ ուղարկուած է 104,270 արկղ թէյ. բայց սրանից բայխովեան թէյ 63,300 արկղ, ծաղկաւոր թէյ (цвѣточный) 690, զալմուղի (кирпичный) սև թէյ 21,200, զալմուղի կանաչ թէյ 18,9000 և պլիտներով 280. գները դեռ յայտնի չեն. առևտրական համաձայնութիւնը վաճառանոցների մէջ կը կայանայ օգոստոսի 5-ին. մանր վաճառի մէջ բայխովեան թէյի գնի վերայ աւելացաւ 20 ր. իւրաքանչիւր արկղին, զալմուղի թէյերը դեռ ևս անփոփոխ են մնում. սպասում են, որ շաքարի գինը կը բարձրանայ. առևտրական տներին է վաճառվում. եկած գնողներ քիչ են։

ԼՈՆԴՈՆ. Պատգամաւորների ժողովում պատերազմական մինիստր Սմիթը յոյս յայտնեց, որ շուտով կը կարողանայ արձակել պահեստի զօրքը, և թէ ուրիշ միջոցներին ձեռնամուխ կը լինի Անգլիայի պաշտպանութեան համար։

ՍԻՄԼԱ. Լսվում է, որ դեկտեմբերի վերջը Լահորի մօտ կը կեդրոնանայ 50,000 զօրք ռազմական վարժութիւնների համար թէ անգլիական զօրքերի Հնդկաստանում 6,000 մարդո շատանայ։

ԼՈՆԴՈՆ. Կ.-Պոլսից հեռագր են, որ Հայոց պատրիարքը ժում է այն տեղեկութիւնը, պես թէ ինքն աշխատել է Հա տանում վերանորոգումներ նելու և յայտնել է, որ Հա քաւական են սուլթանի կառա րութիւնից։

ԼՈՆԴՈՆ. Բերլինից հեռագր են, որ Կ.-Պոլսից ստացած կութիւններին նայելով, Դ մոնդ-Վոլֆի առաքելութիւնը յաջող կը վերջանայ և թէ Թ կան շրջաններում այս հարցի թիւ ինտրիգներ և տարաձայ թիւններ են տիրապետում։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆ

Լոյս տեսաւ
Ֆ. ՇՄԻԴԹԻ
Բենիամին Ֆրանկլին.
Երկրորդ տիպ.
Թարգ. գերմ. Վարդանեան.
Գինն է 40 կոպ.

Մամուլի տակն են Ֆ. Շմիդթի
Գէորգ Վաշինգտոն, գերմ. թար
Փ. Վ. Երկրորդ տիպ, 140 էջ.
Հոմէր Իլիականը, արձակ պ
մուած, գերմ. թարգ. Փ. Վ. 340

Լոյս տեսնելու համար նիւ
կան ձեռնտուութեան կարօտ է
Գրուբէի ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆ
Նոր ժամանակից, գերմ. թար
Փ. Վ. Մի հատոր, 600 էջ։

ԿՈՖԷ ՄՈԿԿՈ
Ս. ՍԻՌՈՒ և ԸՆԿ.
(Ա. 2392.) 48—2

Eau de Cologne des tuileries
De RIGAUD et C°
Rue Vivienne, 8, PARIS
Օ ՏԸ ԿՕԼՕՅՆ ՏԷ ԹԻՒԻԼԷՐԻ
Ռիգօ և ընկերութեան
Վիվիէն փողոց № 8
ՓԱՐԻԶ

Տարաշխարհիկ և հազուագիւտ անուշահոտ ծաղիկներով պատրաստուած այս Օ տը Կոլոյնը ամէն փափկասուն կանանց և օրիորդաց միակ գործածածն է այսօր։ Ընտիր, քաղցրաբոյր, ախորժելի և տևական հոտ մը ունի, այս պատճառաւ է որ փափկամորթ և նազելի կանայք և օրիորդք գործածում նրան թէ դաշինակի վերայ և թէ լուացուելու համար։ Ծախվում է Թիֆլիս Կովկասեան դեղագործական ընկերութեան կեդրոնատեղին։

(ամ. 5) 9-

Дозволено цензурою. Тифлисъ, 1-го Августа 1885 г. Տպարան Ա. Ա. Միխելսոնի տ. № 12. Типографія А.А. Михельсона, Гол. пр. д. № 12.